

ՄԷՐ ՄԱՌՈՒՄԸ

ՀԱՅԿԱՅԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

Թ Ե Ր Թ Ը 40 Փ Ա Ր Ա Յ

ՓԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Տէրութեանց իբր միջնորդ միջամտիլ սկսած վարկեանէն, կրտսէ վիճենայի Բրէսէ թերթը, արեւելեան խնդիրը նոր շրջանի մը մէջ պիտի մտնէ, և ինչպէս թուրքիոյ Պետական անձինքը իրաւամբ կ'կարծեն՝ Եւրոպայէն ատեն պիտի հասկնայ թէ այսպիսի խնդիր մը լուծելը որչա՛ի դժուար բան է:

Եթէ Ռուսիա իր խօսքիւ վրայ հաստատ կենայ և աշխարհակալութեան ունէ փափաք մը չունցանք իր իշխանութեան մասնակցեալ հետ հասարակականութեան վայելելը խնդրէ, ինչպէս Ոսմանադրութիւնն ալ կ'որոշանայ արդէն, այն ատեն միջամտող տէրութեանց գործը պիտի դուրսնայ, և իրարմէ թէ Ռ. Դուռը Բոնիքէ-րանի բրտկրամին գլխաւոր կէտերէն մէկուն զիջանելու պատրաստ է, այսինքն բարենորոգմանց գործադրութիւնը տէրութեանց հաւաքական հսկողութեանը տակ դնելու որոշումը կընդունի, զոր ի սկզբան ընդունելու արամադիր չէր երեւար երբէք: Այս չէզոքութեան հիման վրայ՝ կրնայ ուրեմն քիչ ատենի մէջ հաշտութիւն կնքուիլ:

Բայց Ռուսիոյ ինչ նպատակի ծառայելը չկրնալ տեսնելու և Ռուսիոյ կառավարութեան՝ Լիվաւիայի բրտկրամին հետեւելու մտադիր ըլլալուն հաւատարմութեան համար պարզապէս կոյր ըլլալու է մարդ: Երբոր տէրութիւնք իւր կամքը յայտնելու հրաւիրեն զՌուսիա, սա պիտի ստիպուի իր գիտաւորութեան ինչ ըլլալը խոստովանիլ, և Ռուսըն ալ իրաւամբ կ'կարծէ թէ այս պաշտօնական յայտարարութիւնը խիստ նպաստաւոր տոյց պիտի ըլլայ իրեն:

Չկարծուիր որ ամբողջ Եւրոպա՝ թուրքիոյ բաժանմանն ու Ռուսիոյ ատոր մասերէն մէկը աշխարհակալիլուն հաճութիւն տայ: Դուռը յանուն դաշնագրութեանց միջամտութիւն մը խնդրեց, և դրեթէ ասով հարցուցած եղաւ տէրութեանց թէ դաշնագրութեանց և թուրքիոյ նկատմամբ եղած համադրալին խոստմանց յարգը կը ճանչեն, կամ չէ նէ օսմ: Կայսրութիւնը Ռուսիոյ ձեռքը պիտի տան, որ ուզածը ընէ:

Բ. Դրան այդ միջամտութիւնը առաջարկող շրջաբերականաւ իրաւունքի և արդարութեան զգացմանց իրեն նկատմամբ դեռ գոյութիւն ունենալ կամ չունենալը հասկնալ ուղիւր՝ անկէ յայտնի է որ հաշտութեան բանակցութեանց իբր հիմնական պայման միայն կ'ճանչնայ իր անկախութիւնն ու իր երկրին անբռնաբարելիութիւնը, իրաւ է որ ասի կրնայ միջամտութեան գործին խոչընդոտ մը ըլլալ, որովհետեւ պատերազմները սովորաբար առանց երկրական փոխարկութեան մը չեն ըլլար, ինչպէս 66ին Աւստրիոյ պատերազմը և 71ին Ֆրանքո-գերմանական պատերազմը, Բայց պէտք չէ մոռնալ թէ ոչ Աւստրիա և ոչ ալ Գաղղիա՝ իրենց երկրային ամբողջութեանը համար Եւրոպայի երաշխաւորութեանը տակ չէին, մինչդեռ 56ի դաշնագրութիւնը հանդիսաւոր կերպիւ Եւրոպիոյ երաշխաւորութեանը տակ դրած է զթուրքիա յապահովութիւն իր ամբողջութեան:

Բարեդի դաշնագրութիւնը, Ռուսիոյ զայն ոտնակոխ ընելու զգուշութիւնը՝ ջնջուած չըլլար, ընդհակառակէն կ'կարծեմք մեք թէ յայտնի գոյութիւն մ'ունի ատի, և թէ պարտք դրած է զայն ստորագրող տէրութեանց

վրայ որ միջնորդութիւնը ընդունին: Եթէ Աւստրիոյ կառավարութիւնը՝ միջամտութեան գործին մասնակցելու արամարութիւն ցոյց չտայ, ատկէ պիտի կրնայ հետեւել թէ իր քաղաքականութիւնը Ռուսիոյ լարած որոգայթին մէջ ընկած է, որովհետեւ յայտնի բան մնէ թէ այս պահուն Ռուսիա՝ դեռ պանդխտութեան ձանձրացուցիչ և անպատեհ բանակցութեանցը ականջ կ'ախելէն չհամար չունի:

Իսթըրն Պրեսէնթ անգղ. թերթին վիճենայի թղթակիցը գրած: 15 թուականաւ հետեւեալը կ'ըզէ:

Լոնտոնէն կ'ըզեն մեզ թէ Լորտ Տէրպի՝ միջնորդութիւն խնդրելու համար Սէրվէր բաշայի օտար տէրութեանց դրական մէկ ծանուցագիրը կարդացել է երէկ պաշտօնէից ժողովոյն մէջ: Հոս այս ծանուցագիրը այնքան գոհացուցիչ չնկատուի, և որմէ իրօք կերեալ թէ, թուրքիոյ ինչ կացութեան մէջ գտնուիլը դեռ աղէկ մը հասկցուած չէ Կ.Պոլսոյ մէջ:

Ամեն ոք համոզուած է թէ Եւրոպա խիստ կ'փափաքի որ ներկայ պատերազմին հետեւանքն եղած աղետալի վիճակը ժամ մը առաջ վախճան գտնայ, ու նաեւ Բլէյքսլայի դիւցազնին պէս մարդիկ յարուցանող ազգի մը նկատմամբ համակրութիւն ցոյց տրուիլը այնքան զարմանալի բան մը չէ: Եւրոպա ճանկները մեղքնալով, այնպիսի տէրութեան մ'ալ վախը կը կրէ իւր սրտին մէջ՝ որ կրնայ իւր ամենայնադուզն դիտումները այս պահուն իրագործել փորձելու, քանի որ յաջողութիւնը իր կողմն է: Ահա բոլոր այս պատճառներով իր կրաւորական

գիրքը թող տալու համար դեռ պանդխտութեան վրայ բանեցուած ճնշումը հետզհետէ կ'աւելնայ:

Բայց վիճենայի մէջ կ'կարծուի նաեւ թէ Ռ. Դուռը հաշտութիւն կնքելու ճամբարի փափաք մը չկրէր դեռ: Եւրոպա չկրնար ընդունիլ Սէրվէր բաշայի շրջաբերականին յիշած այն մէկ հատուածը թէ Կալսերական կառավարութեան խիղճը հանդարտ է, և ոչ մէկ կերպով մը ներկայ պատերազմը ինքզնիքեւ չըլլալուն համար, քաջ գիտնալով որ պատերազմը տեղի չպիտի ունենար՝ եթէ թուրքիա իր պահանջումները ընդունէր:

Նոյն շրջաբերականին մէջ Օսմ. Սահմանադրութեան նկատմամբ եղած ակնարկութիւնն ալ անտեղի կ'նկատուի: Տէրութիւնք չեն կրնար երբէք՝ իբր փոխարկութիւն իր ըրած անհուն գոհողութեանց, Ռուսիոյ առջեւ դնել այնպիսի սահմանադրութիւն մը, զոր Ս. Բլէյքսլայ պուրկի կառավարութիւնը առաջին վայրկեանէն՝ քրիստոնէից վիճակը երաշխաւորելու անբաւական յայտարարած էր: Եթէ Դուռը իրապէս հաշտութիւն կուզէ, ուղղակի Ս. Բլէյքսլայ պուրկի կառավարութեան գիմնով այդ մասին յաջողութեան աւելի մեծ յոյս մը կըրնար ունենալ:

Ահա հետեւեալն ալ դարձեալ միւսնոյն խնդրոյն վրայ թղթակցի մը գրած նամակին համառօտութիւնն է:

Ներկայ տագնապալից կացութեան մէջ, Սուլթանին խորհրդարանը բանալը ստուգիլ հաշտութեան կանխանշան մը չկրնար համարուիլ: Ի սկզբան կենթադրութեան թէ դահլէյկեց ըլլալէ վախճալով: Սուլթանը՝

հաշտութեան պայմաններն ընդունելու պատահականութեամբ թիւեր խորհրդարանին վրայ ձգել կուզէ։ Բայց խորհրդարանին բացմանն առթիւ կայանող բոլոր անհրաժեշտ թիւերը, որ Օսմանցոց հայրենասիրութեանը յորդոր կ'ընդունայ, իրօք այս կերպ նպատակ մը չունի, և այս հաստատութիւնը թէ Սահմանադրութեան գործադրութեամբ միայն կայսրութիւնը կրնայ վերստին՝ բաւական է տպացուցանել թէ թուրքի և Ռուսիա որչափ տարբեր գաղափարներու կ'ձառնայեն։

Իսկ Աւստրիա պարտի, իբր բոլորովն զատ տէրութիւն մը, իրաց ընթացքին առջև խոնարհելով, ներկայ պարագայներուն մէջ՝ թուրքիոյ հարկատու իշխանութեանց հետ բրած դաշնակցութեան սկսեցած կասկածելի հանգամանքը հակառակ՝ աւելի ոչ-սահմանադրական Ռուսիոյ՝ քան թէ սահմանադրական թուրքիոյ հաւատարմ պարտական է։

Ռուսիոյ բնդունելիք հաշտութիւնը անձամբ Սուլթանը միմիայն կրէրու է, որովհետեւ չկարծար որ Օսման խորհրդարանին խօսքն անգամ բլաշխայն դեռ կրնամք խաղախեւրան՝ իբր ազատութեան պաշտպան՝ գալով ազատութեան պահպաններն եղող օսման ծերակուտի անգամներն իրենց անտեսելէն վաճառելու տեսարանին ալ սպասել։

Եւրոպական միւս թերթերն ալ սոյն կացութեան առաջը՝ ուղղակի հաշտութեան վրայ երկար բարակ խօսիլ սկսած են։

Մարդ բաւական գատողութենէ զուրկ ըլլալու է, կըսէ Սէն-Քէթրայուրիկի կազմը, չգիտնալ ձեւացնելու համար թէ ներկայ պատերազմը այնպիսի նոր կացութիւն մը առաջ բերած է՝ որ ալ սակէ 11 ամիս առաջ կարելի երեւցածին հետ ամենեւին յարաբերութիւն մը չունի, թէ պատերազմաց նպատակը՝ առաջաց անլուծելիքը կատարած խնդիրները հասունցընելով զանոնք դէպ ի լուծման առաջնորդել է, և թէ ու է պատերազմ մը անարդարանալի է՝ եթէ անոր հետեւանքը կարելի եղածին չափ կաւոյն պատճառ եղող չարիաց դարման մը գտնելով, միևնոյն պարագայներէն յառաջ դալիք նորանոր պատերազմաց պատահականութեան առաջը առնել չրլալ։

Կազմը ալ Սէն-Քէթրայուրիկի սոյն տողերը մեկնութեան չեն կարօտիր, Կ. Պօլսոյ Գոնֆէրանսը անցած գացած ըլ-

լալով, Ռուսիա իր միտքը դրածէն առելի բան մ'ալ ստանալու է ըսել կուզէ։

Միւս կողմէն ալ Ռուսիոյ կողմը բռնոց նօս թերթը՝ իր մէկ յօդուածը հետեւեալ կերպով կ'ընթացնէ։

Քօնֆէրանսի առաջարկութիւնները, կըսէ վերոյիշեալ թերթը, նոյն իսկ Եւրոպիոյ հարկ անհրաժեշտ նկատած պահանջները առանց պատերազմի ձեռք ձգելու համար երկուստէք զիջողութիւններով գոյացած իրաւախօսութեան մը արդիւնքն էին։ Բայց պատերազմին տեղի ունենալէն և Ռուսիոյ ալ 100 հազարի մօտ մարդ վրայ տալէն յետոյ, ազայուլութիւն է կարծել թէ պիտի բաւականանայ այնպիսի պայմաններով, որք ասկէ տարի մ'առաջ միայն գոհ կրնային ընել զինքը։

Միմիայն կազմը ալ Սէն-Քէթրայուրիկի տեղի վերջին թերթը, որն որ Ռուսիոյ դատին չեղման պայմանէ, հեղինակութեամբ մը՝ Ռուսիոյ առաջարկելիք պայմանները հետեւեալներն ըլլալ կ'կարծէ։

Ս. Քէթրայուրիկի գահ-իճը, կըսէ վերոյիշեալ թերթը, իր անդրակովկասեան երկիրները ապահովելու համար կարեն ու Պաթումը պիտի ուզէ, առժամանակեայ կերպով եւրոպական Տաճկաստանէն քունի մը գտառ պիտի գրաւէ՝ հաշտութեան պայմաններուն գործադրութիւնը ապահոված ըլլալու համար, քրիստոնէից պաշտպանութեան իրաւունքը պիտի պահանջէ, զոր խրքով պատերազմէն առաջ իր վրայ առած էր արգէն, և քանի մը տեղեր ալ իր երկրին պիտի միացնէ։

ՌԼԷՎՆԱՅԻ
ԱՆՁՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ
(Շար. և վերջ տես թիւ 1817)

Այսպէս Ղազի Օսման բաշա կամայ ակամայ ստիպուած էր առանց պայմանի անձնատուր ընել իւր քաջարի բանակը, որով այնքան երկար ատեն կըցեր էր այժմ հաշտութեան եղող այդ Ռէֆէայի տախտակին պաշտպանել։

Այս գործը լմնեալէն ետքը ետ դարձանք մեք, և Օսման բաշա ալ կառք մը մտնելով Ռէֆէայ գետոյ՝ Բանի մը վայրկեանէն Նիքօլա մեծ գուքը հոն հասաւ իր սպայակոյտովը, ուրախութեան աղաղակներով ընդունուելով ուր զօրքե-

րուն անցահանդէս մ'ընել տրուաւ, և քանի մը գովաբանական խօսքեր ուղղեց իրենց։ Այնուհետեւ կամարն անցանք։

Տեսարանն այժմ բոլորովն փոխուած էր։ Այլևս զինեալ տաճիկ մէկ հոգի մը չէր տեսնուել։ Օսման բաշայի հետ տեսակցութիւնը ժամը 2ին եղած էր, ժամ մ'ետքը բարձր Տաճկերէն գէնքերէն առաջանալէն, Երէն իրենց եղած հրամանին կատարելագէտ հնազանդելով իւրաքանչիւր զինուոր պարզագէտ իւր ձեռքի հրացանը՝ դառնում տեղերէն՝ հոն ցելին մէջ ձգելով թողել էին։ Դետներն երեսը թիպօտիկ և Մարթինի հրացաններով ծածկուած էր, որոնք յա. և սպառնաւ մտնող մէջնային մեծ կորուստ ու կոտորած պատճառեցէին Ռուսաց, ճանաչելով իր թողուած զէնքերը քանի մը րաբարձութեան կ'հասնէր, որոց վերայէն կոխուածով կանցնէին ձիերէն, հարիւրաւորներ կոտորելով ու ջանջախելով իսկ Օսման բաշայի բոլոր բանակը, թիպօտիկ հրացաններով զինեալ չէր, ինչու որ խել մը Շիպայաւրի և մեծ մաս մ'ալ Քրանքուսի հրացաններ տեսայ, որոնք հաւանականաբար՝ յա. և սպառնաւ մտնող պատերազմներուն մէջ առաջ ձեռքէն առաձնին ըլլալու էր։

Յարմարայլ Ռէֆէայ կ'առնայինք, Քրէյնի և Օբանէսի ջած բլուրներուն ու հովտաց մէջէն, երբ յանկարծ եղով ընծուած սայլերու չեղձկոյտ մը ելաւ դէմերէն, զորս Օսման բաշա հետք պիտի տանէր եթէ պաշարման դիմը խզելու յաջողէր։ Ասանք 5-6 հարիւրի մը չափ կային, որոց մէջ խել մը սայլիւր ալ տեսայ՝ որ մասնաւոր մարդոց վերաբերելու էին, ինչու որ վրանին բոլորն ալ տաճիկ կանայք ու տղայք և տան կահ կարասիքներ բեռնուած էին։ Մարդս կ'սարսափէ մտածելով թէ այդ փոքրիկ և անմեղ արարածներն կրակէ այն սոսկալի և սպանիչ շրջանակին մէջ կը գտնուէին, երբ բանակն իր դուրս յարձակումը կ'կատարէր, բայց չատ բարեբաղդ են եղեր որ իրենց նստած սայլերն այդ միջոցին մինչև վիտի կամօղին մօտը չեն հասեր, որով կըցնէր են մահուընէ ազատուիլ։ Առնց մօտէն անցած ատենն իսկ ժանտաղէմ պառաւ կին մը միզի ուղղեալ խել մը կըքու խոշոր բառեր կարտասանէր, և ատելութեան հայեացք մը կարճակէր մեր վրայ։ Մարդ ու չէր բաւ այս կնոջն անէմքներուն, բայց մինչդեռ սա կ'հայհոյէր, անդին քանի մը առաձիկ զին-

որներ իւր նստած սայլին մէջէն մածուն և բանիւր գտնելով, առանց ձայն հանելու, յափշտակեցին ու սկսան անյադարար ուտել, այսու պատախն անէմք իրենց վրայ ալ հրատիրելով։

Նորէն կեցանք բնթողքնուս մէջ, երբ յանկարծ «Օսման» ի սղոյակ մէկ բրդուր խոկոյն ձիս յառաջ շրջիլ տեսնելու համար թէ իրօք Օսման բաշան էր եկողը, որն որ իմանալով թէ Նիքօլա մեծ գուքն դէպ ի այն կողմն եկեր է, կառքին ճանաչաւ դարձելով տուեր էր անոր հանդիպելու համար։ Օսման բաշայի քով 50 խաղախ դրուած էր, ետեւէն ալ 30ի չափ տաճիկ սպայներ, ամենքն ալ փոքր հասակաւ ձիերու վրայ նստած։

Ամենքն ալ գրեթէ առանց բացառութեան դեռ պատանի էին, հազիւ մէկերէն մէկ հոգի մը կար որ 30ը անցուցած կերէր։ Մեծ մասը պարզագէտ գործակալն ու տնտեսներու յատակ դէմք մ'ունէին։ Այս տղայոց հետ է որ Օսման բաշա այսքան մեծ հրաշտութիւնը կը գործէր՝ Վիլհելմի եւ ինքնիրենս։

Նիքօլա մեծ գուքը դէպ ի Օսման բաշայի նստած կառքին մօտեցաւ, և երկու հրահանատարներն երկու վարիներ չափ անբարեառ իրարու նայեցան, Յետոյ մեծ գուքը ձեռքէն երկնցնելով թօթեց բաւականաբար Օսման բաշայի ձեռքը, ըսելով իրեն, «Կնո՛ր հաւորեմ՝ զձեզ բրած Ռէֆէայի պաշտպանութեանը համար, որն որ յիշատակաց արժանի զինուորական ամենափառաւոր դէպքերէն մին է»։ Օսման տխուր ժպիտ մ'արձակեց, վերաւորեալ ըլլալով հանդերձ, զբոռաւորութեամբ մ'ելաւ ոտքի վրայ, քանի մը խօսք բրաւ, զոր չկրցի լսել և յետոյ նստաւ նորէն։ Բոլոր ուս սպայք միւտերան «Պրաւօ, պրաւօ» գոչեցին, և ամենքն ալ յարգանք բարձի կեցան դէմը։

Չկար մէկը որ ամենամեծ համակրանքը ու հիացմամբ չը նայէր Ռէֆէայի դիւցազնին վրայ։ Բուժանիւր կարուս իշխանը, որ նոյն պահուն վրայ հասեր էր, նոյնպէս յառաջ անցաւ և Նիքօլա մեծ գուքին բրած խնդակողութիւնը ինքն ալ կրկնեց Օսման բաշայի ձեռքը սեղմելով, որն որ նոյնպէս ոտքի ելնելով խոնարհութիւն ըրաւ, իսկ այս անգամ լուռ կեանալով բան մը չըսաւ։

Օսման բաշա երկար վերադառնալու մը հաղած էր, առանց իւր աստիճանն յայտնող նշան մ'ունենալու վրան, և կարմիր ֆէշ-

մը գրած էր Գլուխը Մոտո և կորովի կազմուածքով մարդ մէկ, քիչ սև մորուօք, մէջք փոքր ինչ ճերմակ կոշտ սկզբած. գէտքը պատկառանք կազգէ, որոյ գծագրութիւնն ալ կտրուկութիւն և հաստատումը մըտութիւն կարտայայտէ. իսկ գէտքն այս միջոցին շատ յոգնած, գայլահար և խորշումած էր, որոյ կնիքներն այնքան խորունկ բլրալու չէին տակէ ցամիս առաջ. Այբերն սև են, նայուածքն ալ խոհուն և տըխուր:

—Մեծ գէտք մէկ ասի, գոչեց Գաղղիոյ գինւորական կըցորդը դնդապետ կայեառ, կը տատամէի սեանել ալդ մարգը, վախճալով որ ակնկալութեամբ մէջ չ'իտարուի, բայց ինչ որ գազափարած էի իրեն վրայ, նա կատարելապէս ճշմարտեց:

—Չիւտորական մեծ գլխաւորի մը գէտքն է սա, բաւ քիչ քաղցէի քորապետը, բարեբաղդ եմ գոյն տեսնելուս համար, իւր անձնատուր բլրալուն հակառակ դարձեալ Ղաղի-Օսման է, և փախալով Օսման պիտի մնայ մինչև վերջը:

Թերեւս չափազանցութիւն մը համարուին այս խօսքերը, բայց երբ մտածէ մէկը թէ երբ Օսման բաշա իշխանայի մէջ կանաւոր լանակ բռնած բանը չունէր, այլ խել մը զինեալ մարդոց ամբողջ մը, որք իրենց զինավորական կրթութիւնը միշտակ իշխանայի խրոմներուն մէջ և պատերազմի դաշտացը վրայ առած էին, որք տաճիկ գիւղացիին յատուկ եղած բնական և կուրօրէն հնազանդութենէ մը զատ ուրիշ կարգապահութիւն չունէին, այսպէս կազմակերպեալ մարդոցմով որոյ զինւորապէս չկրնար «բանակ» բառիլ այդքան հիւանալի պաշտպանութենէ մը յետոյ դժբաղդ փառաւորութեամբ մը կարող եղած էր իւր պաշտօնին վախճան մը տալու, ստուգիւ չգրտնախր մէկը որ Սքոպէլէֆի բաւածը չկրնէ:

Պէտք է գիտնալ թէ Օսման բաշայի վրայ սա պարագային մէջ հասարակ զինւորական օրինաց համեմատ դատաստան չկրնար ըլլալ քանի որ նա իր հետը «կանոնաւոր բանակ» ըսուած բանը չունէր. Այլ ասի զինւորական հանձնարոյն ամենէն գերազանցն ու բարձրագոյն կերպաւորութիւնն է, այնպէս որ զորապետաց շատը անկարելի կ'ըսեն որ այդ տեսակ միջոցներով այս աստիճան հիւանալի արդիւնք մը ձեռք բերուի: Օսման բաշա բնաւ հանձնարել և փորձառադէտ

սպայ մը չունէր իր քովը Ռուսի իշխանայի այս ահարկաւ պաշտպանութեան գործոյն բոլոր ծանրութիւնը միմիայն իր երկու ուսերուն վրայ բարձած էր. իբրև ճիտանան հսկող մը, իւր անփորձ և անզօր մարդոցմով «աշխարհիս» ամենէն լինելով անորակ տէրութեանց մէկուն վարժ և կանոնաւոր զօրաց հոծ բանակի մը լէգէոններուն գէտ պայքան ընդերկար մաքրութիւն:

Օսման բաշա արգարեկ դատուած ամենէն նշանաւոր զինւորական մարզն եղած է:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ե.

Ընդհ. Ժողովը Գրեթի դռն փակ նիստ գումարեց ի Պատրիարքարան, յետուս ֆեան էֆի ատենարանութեամբ և 90ի չափ երեսփոխանաց ներկայութեամբ, Օրակարգ ունենալով իրեն միմիայն Պատրիարքի հրաժարման խնդիրը:

Ս. Պատրիարքը գործեալ բացալով կ'ըստէր, և միայն պարզ հրաժարագիր մը յանձնած էր Դիւանին առանց ունէ պատճառաբանութեան, յայտնելով թէ անձնական վատաւորութիւնն տնաւական ըլլալով ըստ արժանոյն վարել պաշտօնը, անդառնալի կերպիւ հրաժարելով ստիպուած էր, և կ'իշխանէր որ անյապաղ ընդունուի հրաժարականը:

Այս միջոցին անտեղի միջադէպ մը տեղի ունեցաւ: Պատրիարքարանի վերի սրահը խոնաված 40-50ի չափ երկտասարդք որոց մէջ ընդ ամենը մինակ մէկ տարեւոր անձ մը կը գտնուէր, հետաքրքրութեան համար Պատրիարքարան իջած ըլլալով, երբ Խորհրդարանին դռները փակուած կ'տեսնէր, բռնի ներս մտնել կ'փորձէր ժողովին վիճարկութեանը ունկնդիր ըլլալու համար, բայց երբ դռնապաններէն կ'արդիւնին, դռները դէմ յորձակելով վարագորթը կ'պատռեն, դուռը հրելով բռնի կ'բանան ու ներս կ'տուժեն:

Ետուս ֆեան էֆ. ասոնց այս վարմունքին ապօրինաւոր ըլլալը յայտնելով, դուռն ելնել կը հրաւիրէ դռնը, որ եթէ բռնիք մ'ունեն պատգամաւորութեան մը միջոցաւ յայտնեն և պատասխան ընդունին: Ասոր վրայ պատգամաւորութեան մը միջոցաւ կ'իշխանէր ամբողջ որ նիստը դռնբաց ըլլայ, որպէս զի իրենք ալ լսեն ժողովն այս խնդիրը նկատողութեան առնելով նարպէսը բազանին, Ամբողջութեան և Հմայեակ վարդապետաց և ուրիշ

հարց կ'յանձնէ իր որոշումը տանիլ ամբողջին հաշորդելու: Եկեղեցական հարք դուրս ելնելով երբ խորէն սքրազան կ'հարկէր որոշումը, նորէն արժուկ ելնելով ձայնը կ'խափանէր, վերջապէս Ամբողջութեան վարդապետ առնելով խօսքը, կ'համոզէ զիրենք որ ժողովին վրայ վատաւորութեան իրենց իրաւունքը պիտի պահպանուի, մինչև իսկ եթէ կայտեր ալ պէտք ըլլայ ներկայանալ պիտի ելնուին, թող իրենք ապահով ըլլան: Ասոր վրայ ամբողջը կ'ըսուի, և ժողովն իր օրակարգի խնդիրը ձեռք կ'առնէ:

Դատ մը վիճարկութիւններէ (յորում իրարմիջեւ եպիսկոպոս և Ամբողջութեան վարդապետ Պատրիարքին դէմ խել մը անյարմար և անհեթեթ ակնարկութիւններով լի առեւնախօսութիւններ գոռացուցին) ու առաջարկութիւններէ ետք, որոնցմէ ոմանք հրաժարականն անյապաղ ընդունին, և ոմանք խօստով չընդունին կ'իշխանէր, վերջապէս Ս. ֆափաղեան էֆի առաջարկութիւնը, որ կ'ըսէր «կ'առաջարկեմ Ս. Պատրիարք Հօր հրաժարականի խնդիրը օրագրել մինչև ամիս մը, և խնդրել Ն. Սրբազնութեանէ որ իր պատրիարքական պաշտօնը շարունակէ մինչև ամիս մը, և յանձնարարել Առնեապետացի դիւանին որ բանակէ Ն. Սրբազնութեան հետ իր հրաժարականի խնդրոյն վրայ, յայտնելով Ազգ. Ժողովոյ վրաստանութիւնը և Նորին նկատողութեանը երթարկելով քաղաքական արդի հանգամանքները և վերջական պատասխանը բերել յաջորդ նքուստին, որ պիտի գումարի յուն: «վար 20», ուրիշ օր»:

Քուէի դուրսելով մեծագոյն մասամբ ընդունուեցաւ, և ժողովը 3 ժամ ի կորուստ և պարագայ ատեն վատնելէն յետոյ, փակեց իւր նիստը և շրջանցան ժողովականք, թերեւ այն համադրմամբ թէ այն օրն ալ բան մ'ըրին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իբրև ստորդ կ'հաւատեն թէ Լորտ Տէրապի մէկ հեռագիրն երէկ հասնել է հոս Պ. Լայարտի, յայտնելով որ եթէ հաշտութիւն կնքել տալու համար Անգղիոյ ձեռնարկած այս փորձը չյաջողի, թուրքիոյ ամբողջութիւնը պահպանելու համար պատերազմ պիտի հրատարակէ Ռուսիոյ դէմ:

—Վաղըթ այսօրուան թերթով, իր առած վաւերական տեղեկութեանցը համեմատ, կը հաւատան թէ Ռուսիոյ պատասխաններէ Անգղիոյ, թէ «այս մասին իր միջնորդութիւնը չը կրնար ընդունիլ, բայց եթէ թուրքիա ուղղակի Ռուսիոյ դիմելու ըլլայ, այն ատեն ինքն ալ կ'յօժարի հաշտութեան բանակցութեանը մասնելու»:

Եթէ ասի ստորդ է, Անգղիոյ պատերազմ հրատարակելու մօտալուտ է բնի է:

—Երբ գիշեր անձանթ չուգենաւ մը Սև ծովու նեղուցէն

ներս մտնել փորձելով, նեղուցին մարտկոցներէն սրուած արգիլման նշաններն առանց մըտիկ ընելու, սակայն օդին բռնունթեմէն նեղուցին մօտ տեղ մը խրեր է, ինչ ահաւակ չոգենաւ բլրալը դեռ հասկցուած չէ:

—Պիգմարք այս օրերս ակուսի մը մէջ բսեր է թէ եթէ թուրքիա «հիւանդ մարդ» կը կոչեն, Անգղիան ալ «հիւանդ կին» կ'ոչելու է:

—Մէրսին չոգենաւուն Ռուսաց ձեռքէն ազատուելու լուրը, զոր երէկ Պատրիարքն առած էր, սուտ ելած է: Ռուս չոգենաւունց Մէրսինի վրայ բացած ուժաւորութեան ձայնը ինչպօղլէն լսուել է:

Յիշեալ չոգենաւուն մէջ Ասիոյ օսմ. բանակին կացութեանը վրայօք Մոսկովա բաշայի գրած տեղեկութիւններն ալ կը գտնուին եղբի, որ տէրութեան դադարներն էր:

Շոգենաւոր Սէվասթօփօլ քաշուելով մէջի մարդիկն ալ Սիմքերօփօլ տարուել են:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 31 դեկտ. Միջնորդութեան համար Բ. Դրան բրած խնդիրքը Անգղիա ընդունելով, իսկոյն Չարին դիմեց հաշտութիւն կնքել տալու համար: Մօրնիկ Բօսթ կըսէ թէ հաշտութիւնը միմիայն Ռուսիոյ կամքէն կախում ունի, և կ'յաւելու թէ, չկարծեր որ Ռուսիա ընդունի Անգղիոյ միջնորդութիւնը: Անգղիա հրաման ըրեր է իշխանութի նաւահանգիստը գտնուող նաւատորմին, որ յնվ. 17ին ճանաչայ ելնելու պատրաստ ըլլան Լեհասցիք միջինի մ'ընելով հանրագիր մը մատուցին Լորտ Քիքօնֆիլտի, Լեհասցիք թաւաւորութիւնը վերականգնելու համար, իսկ լորտը չընդունեց պատգամաւորութիւնը: Անգղ. թերթերը կը գովեն զթուրքիա, իր գաւառ Անգղիոյ ձեռքն յանձնելուն համար:

Բարիկ 30 դեկտ. Անգղիա ընդունելով թուրքիոյ առաջարկած հաշտարար միջնորդութիւնը, եթէ կարելի ըլլայ՝ հաշտութիւն կնքել պիտի տայ, ապա թէ ոչ պատերազմ պիտի հրատարակէ:

Անգղիոյ ժողովարդն ու կառավարութիւնը իրենց շահերը պաշտպանելու համար դործի սկսելու յօժար և պատրաստ կերեւին:

(Խմբ. Դիտող. — Կ'հրաւիրենք թէրեմանք-էֆքեարը, որ այն հեռագրաց ներքէն ալ կրկնէ իր այն հիւանալի դիտողութիւնը, զոր բրած էր անցած օր բսելով թէ «թէյալաթ տըր իէ-յալաթ»: Ստուգիւ հիւանալի հեռաւորութիւն 40 տարի քաղաքադիտական աշխարհի մէջ ապրող մարդու մը համար):

